



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

8 սեպտեմբերի 2020 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5/1

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 5-ԸՆԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 1-ԻՆ ՆԻՍՏԻ

Նիստին մասնակցում էր Երևանի ավագանու 54 անդամ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Հ. Սարգսյանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին՝ Երևանի քաղաքապետի տեղակալները, խորհրդականները, քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը, քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների և վարչական շրջանների ղեկավարները:

Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Հ.Սարգսյանը ներկայացրեց Երևանի ավագանու 2020 թվականի սեպտեմբերի 8-ի նիստի օրակարգի նախագիծը:

1. Երևանի ավագանու 5-րդ նստաշրջանի 1-ին նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Երևանի ավագանու 5-րդ նստաշրջանի ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի կազմը հաստատելու մասին:
3. Սերգեյ Ներսեսյանին Երևանի քաղաքապետի տեղակալ նշանակելու մասին:
4. Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի փետրվարի 8-ի N182-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին:
5. Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N186-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և գումար հատկացնելու մասին:
6. Երևանի «Արաբկիր նախագիծ» փակ բաժնետիրական ընկերությունը լուծարելու մասին:
7. Երևան քաղաքի վարչական տարածքում գտնվող՝ պետության և համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման տարածքներում (փողոցներ, հրապարակներ, զբոսայգիներ և այլ տարածքներ) շրջաձախ առևտրի իրականացմանը ներկայացվող պահանջները, պայմանները, շրջաձախ առևտուր իրականացնելու միջոցով վաճառվող ապրանքների տեսակները և շրջաձախ առևտրի իրականացման թույլատրելի վայրերը սահմանելու մասին:
8. 2008 թվականի մարտի 1-ին Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների ժամանակ զոհվածների հիշատակին նվիրված հուշարձանի տեղադրմանը համաձայնություն տալու մասին:
9. Հայ մշակույթի ականավոր գործիչների հիշատակին նվիրված հուշակոթողի տեղադրմանը համաձայնություն տալու մասին:
10. Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին:
11. «Երևանի կենդանաբանական այգի» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու մասին:
12. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N1-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին:
13. Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի փետրվարի 12-ի N604-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին:

14. Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N181-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին:
15. Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N182-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին:
16. Երևան քաղաքի Լեփսիուսի 2-րդ փողոցն Ուսուր Բեկ Թեմուրյան փողոց անվանափոխելու մասին:
17. Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N186-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

1. ԼՍԵՑԻՆ - Երևանի ավագանու 5-րդ նստաշրջանի 1-ին նիստի օրակարգը հաստատելու մասին:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 53 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ`53, դեմ`0, ձեռնպահ`0

Որոշումն ընդունվեց միաձայն

2. ԼՍԵՑԻՆ - Երևանի ավագանու 5-րդ նստաշրջանի ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի կազմը հաստատելու մասին:

Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Հ.Սարգսյանը հայտնեց, որ, ղեկավարվելով Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N1-Ն որոշմամբ ընդունված կանոնակարգի 96-րդ կետով, Երևանի ավագանու 5-րդ նստաշրջանի ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովը ձևավորելու նպատակով խմբակցությունները ներկայացրել են առաջարկություններ՝ հաշվիչ հանձնաժողովի կազմում ավագանու հետևյալ անդամների թեկնածություններն առաջադրելու համար.

- ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն՝ Էդուարդ Ավետիսյան,
- ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցություն՝ Մարկոս Հարությունյան,
- ԼՈՒՅՍ խմբակցություն՝ Անի Խաչատրյան

ՈՐՈՇՎԵՑ – Հաստատել Երևանի ավագանու 5-րդ նստաշրջանի ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի կազմը.

1. Էդուարդ Ավետիսյան – Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն
2. Մարկոս Հարությունյան – Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցություն
3. Անի Խաչատրյան – Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցություն

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 54 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ - 54

դեմ – 0

ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

3. ԼՍԵՑԻՆ - Սերգեյ Ներսեյանին Երևանի քաղաքապետի տեղակալ նշանակելու մասին:

Երևանի քաղաքապետի տեղակալի թեկնածությունը ներկայացրեց Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Հ. Սարգսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Հարցերի համար գրանցվել են ավագանու 7 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր ուղղեցին.

1. Գրիգորի Երիցյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
2. Դավիթ Խաժակյան-Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար
3. Թեհմինա Վարդանյան-Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության անդամ
4. Անի Խաչատրյան- Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության քարտուղար

5. Մարկոս Հարությունյան- Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ

6. Սաթենիկ Մկրտչյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

7. Հռիփսիմե Առաքելյան- Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության քարտուղար

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Ս. Ներսեսյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Գայանե Մելքոմ Մելքոմյանը տեղեկացրեց, որ «Սերգեյ Ներսեսյանին Երևանի քաղաքապետի տեղակալ նշանակելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար գրանցվել են ավագանու 3 անդամ.

1. Միքայել Մանրիկյան-Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար

2. Սաթենիկ Մկրտչյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

3. Հրաչյա Սարգսյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Եզրափակիչ ելույթով հանդես եկավ Սերգեյ Ներսեսյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Սերգեյ Ներսեսյանին նշանակել Երևանի քաղաքապետի տեղակալ:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 48 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ`47, դեմ`0, ձեռնպահ`1

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

4. ԼՍԵՑԻՆ-Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի փետրվարի 8-ի N182-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ– Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչության պետի պաշտոնակատար Ժաննա Ղարդաշյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1.Աննա Զավախյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետի տեղակալ Ս. Վիրաբյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Գայանե Մելքոմ Մելքոմյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի փետրվարի 8-ի N182-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Գայանե Մելքոմ Մելքոմյանին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Լևոն Զաքարյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Գայանե Մելքոմ Մելքոմյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի փետրվարի 8-ի «Երևանի ենթակայության կազմակերպությունները Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարների ենթակայությանը հանձնելու և լիազորություններ պատվիրակելու մասին» N 182-Ն որոշման հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 204.1-ին կետով.

« 204.1 «Երևանի հ.154 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ»:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ - ավագանու 41 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ - կողմ՝ 41, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն

5. ԼՍԵՑԻՆ- Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N186-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և գումար հատկացնելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ- Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վիլեն Արևշատյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 3 անդամ.

1. Սաթենիկ Մկրտչյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

2. Լևոն Զաքարյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

3. Էռնեստ Ավանեսով- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Հ. Սարգսյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Լուսինե Գևորգյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N186-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և գումար հատկացնելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Լուսինե Գևորգյանին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Սաթենիկ Մկրտչյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Լուսինե Գևորգյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի «Երևան քաղաքի 2020 թվականի բյուջեի մասին» N 186-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) հաստատված Երևան քաղաքի 2020 թվականի բյուջեի.

1) եկամուտների գումարը ավելացնել 60,014.0 հազար դրամով,

2) ծախսերի գումարը նվազեցնել 233,386.0 հազար դրամով,

3) դեֆիցիտի գումարը նվազեցնել 293,400.0 հազար դրամով,

2. Որոշման NN 1, 2, 3, 4, 5, 6 և 7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն NN 1-7 հավելվածների:

3. Երևան քաղաքի 2020 թվականի բյուջեի ֆոնդային մասի պահուստային ֆոնդից հատկացնել 25,141.5 հազար դրամ՝ Երևան քաղաքում քանդման ենթակա վթարային շենքերի բնակիչներին փոխհատուցման համար բնակարանների ձեռքբերման համար, բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Շենքերի և շինությունների ձեռքբերում» հոդվածով:

4. Երևան քաղաքի 2020 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից

հատկացնել 200,0 հազար դրամ՝ հայրության ճանաչման գործընթացի կապակցությամբ հարուցված վարչական վարույթի շրջանակներում նշանակված «ԴՆԹ թեստավորման» հետազոտության վճարի համար, բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Մասնագիտական ծառայություններ» հոդվածով:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 39 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 35, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 3

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

6. ԼՍԵՑԻՆ–Երևանի «Արաբկիր նախագիծ» փակ բաժնետիրական ընկերությունը լուծարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ– Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի ղեկավար Արամ Դանիելյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Սաթենիկ Մկրտչյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Հ. Սարգսյանը և Արաբկիր վարչական շրջանի ղեկավար Ա. Դանիելյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Գայանե Մելքում Մելքումյանը տեղեկացրեց, որ «Երևանի «Արաբկիր նախագիծ» փակ բաժնետիրական ընկերությունը լուծարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Եզրափակիչ ելույթով հանդես եկավ Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի ղեկավար Արամ Դանիելյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լուծարել Երևանի «Արաբկիր նախագիծ» փակ բաժնետիրական ընկերությունը (գտնվելու վայրը՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Ն. Զարյան 27, պետական գրանցման համարը՝ 264.120.08638):

2. Արաբկիր վարչական շրջանի ղեկավարին սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 7-օրյա ժամկետում ստեղծել լուծարման հանձնաժողով:

3. Լուծարման հանձնաժողովին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում ավարտել Երևանի «Արաբկիր նախագիծ» փակ բաժնետիրական ընկերության լուծարման գործընթացը և 20-օրյա ժամկետում լուծարումից հետո մնացած գույքը հանձնել «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի տնօրինությանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 45 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 45, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն

7. ԼՍԵՑԻՆ-Երևան քաղաքի վարչական տարածքում գտնվող՝ պետության և համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման տարածքներում (փողոցներ, հրապարակներ, զբոսայգիներ և այլ տարածքներ) շրջաձախ առևտրի իրականացմանը ներկայացվող պահանջները, պայմանները, շրջաձախ առևտուր իրականացնելու միջոցով վաճառվող ապրանքների տեսակները և շրջաձախ առևտրի իրականացման թույլատրելի վայրերը սահմանելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ– Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առևտրի և սպասարկումների վարչության պետ Հովիկ Սաֆարյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 8 անդամ.

1. Իզաբելլա Աբգարյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
2. Էռնեստ Ավանեսով- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
3. Պավել Սարգսյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
4. Սաթենիկ Մկրտչյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

ԸՆԴՄԻՋՈՒՄ.

Նիստը վերսկսվեց ժամը 14.00-ին:

5. Դավիթ Խաժակյան-Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար
6. Թեհմինա Վարդանյան- Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության անդամ
7. Լևոն Զաքարյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
8. Սուրեն Էյրամջյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության ղեկավար

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Հ. Սարգսյանը և քաղաքապետարանի աշխատակազմի առևտրի և սպասարկումների վարչության պետ Հ. Սաֆարյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Լուսինե Գևորգյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի վարչական տարածքում գտնվող՝ պետության և համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման տարածքներում (փողոցներ, հրապարակներ, զբոսայգիներ և այլ տարածքներ) շրջաձախ առևտրի իրականացմանը ներկայացվող պահանջները, պայմանները, շրջաձախ առևտուր իրականացնելու միջոցով վաճառվող ապրանքների տեսակները և շրջաձախ առևտրի իրականացման թույլատրելի վայրերը սահմանելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար գրանցվել են ավագանու 3 անդամ.

1. Դավիթ Խաժակյան-Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար
2. Լուսինե Գևորգյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
3. Իզաբելլա Աբգարյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

«Երևան քաղաքի վարչական տարածքում գտնվող՝ պետության և համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման տարածքներում (փողոցներ, հրապարակներ, զբոսայգիներ և այլ տարածքներ) շրջաձախ առևտրի իրականացմանը ներկայացվող պահանջները, պայմանները, շրջաձախ առևտուր իրականացնելու միջոցով վաճառվող ապրանքների տեսակները և շրջաձախ առևտրի իրականացման թույլատրելի վայրերը սահմանելու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Հ. Սարգսյանը:

Եզրափակիչ ելույթով հանդես եկավ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առևտրի և սպասարկումների վարչության պետ Հ. Սաֆարյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Սահմանել Երևան քաղաքի վարչական տարածքում գտնվող՝ պետության և համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման տարածքներում (փողոցներ, հրապարակներ, զբոսայգիներ և այլ տարածքներ) շրջածախ առևտրի իրականացմանը ներկայացվող պահանջները, պայմանները, շրջածախ առևտուր իրականացնելու միջոցով վաճառվող ապրանքների տեսակները և շրջածախ առևտրի իրականացման թույլատրելի վայրերը համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 41 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 31, դեմ՝ 6, ձեռնպահ՝ 4

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

8. ԼՍԵՑԻՆ - 2008 թվականի մարտի 1-ին Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների ժամանակ զոհվածների հիշատակին նվիրված հուշարձանի տեղադրմանը համաձայնություն տալու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչության պետ Գոշ Սարգսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Պավել Սարգսյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչության պետ Գ. Սարգսյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Սաթենիկ Մկրտչյանը տեղեկացրեց, որ «2008 թվականի մարտի 1-ին Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների ժամանակ զոհվածների հիշատակին նվիրված հուշարձանի տեղադրմանը համաձայնություն տալու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար գրանցվել են ավագանու 8 անդամ.

1. Անի Խաչատրյան-Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության քարտուղար

2. Լևոն Զաքարյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

3. Լիլիթ Կիրակոսյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

4. Նուարդ Վարդանյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

5. Սաթենիկ Մկրտչյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

6. Հռիփսիմե Հունանյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

7. Արսեն Կարապետյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

8. Գրիգորի Երիցյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

ՈՐՈՇՎԵՑ – 1. Տալ համաձայնություն Երևան քաղաքի Զաքիյան, Բեյրութի և Սուրբ Գրիգոր Լուսավորչի փողոցներով պարփակված Մանկական զբոսայգու՝ Սուրբ Գրիգոր Լուսավորչի փողոցից դեպի Զաքիյան փողոց ձգվող ցանկապատի 22-23-րդ հենապատերի միջնամասում 2008 թվականի մարտի 1-ին Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների ժամանակ զոհվածների հիշատակին նվիրված հուշարձանի տեղադրմանը՝ համաձայն հավելվածի:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 40 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ`36, դեմ`2, ձեռնպահ`2

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

9. ԼՍԵՑԻՆ - Հայ մշակույթի ականավոր գործիչների հիշատակին նվիրված հուշակոթողի տեղադրմանը համաձայնություն տալու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչության պետ Գոշ Սարգսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Սաթենիկ Մկրտչյանը տեղեկացրեց, որ «Հայ մշակույթի ականավոր գործիչների հիշատակին նվիրված հուշակոթողի տեղադրմանը համաձայնություն տալու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար գրանցվել են ավագանու 3 անդամ.

1. Լևոն Զաքարյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
2. Սաթենիկ Մկրտչյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
3. Արսեն Կարապետյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

ՈՐՈՇՎԵՑ – 1. Տալ համաձայնություն Իսրայելյան հ.37 շենքի հարևանությամբ հայ մշակույթի ականավոր գործիչների հիշատակին նվիրված հուշակոթող տեղադրելու համար:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 35 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ`35, դեմ`0, ձեռնպահ`0

Որոշումն ընդունվել է միաձայն

10. ԼՍԵՑԻՆ - Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի պաշտոնակատար Գարեգին Խաչատրյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 3 անդամ.

1. Իզաբելլա Աբգարյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
2. Սուրեն Էյրամջյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության ղեկավար
3. Լևոն Զաքարյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի պաշտոնակատար Գ. Խաչատրյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Արսեն Կարապետյանը տեղեկացրեց, որ «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Սաթենիկ Մկրտչյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

ՈՐՈՇՎԵՑ - 1. Համաձայնություն տալ՝ Արտավազդ Սահակյանին սեփականության իրավունքով պատկանող Զարյան փողոցի հ.112/6 հասցեում, տարածազնահատման 4-րդ գոտում գտնվող 409.69քմ մակերեսով հողամասը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.24022015-01-0165 վկայական) Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Դավթաշեն «Ձոր-2» թաղամասում գտնվող, տարածազնահատման 6-րդ գոտում գտնվող 969.82քմ մակերեսով համարժեք հողամասի հետ փոխանակելուն:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ - ավագանու 42 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ - կողմ՝ 41, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

11. ԼՍԵՑԻՆ - «Երևանի կենդանաբանական այգի» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Արման Անտոնյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 6 անդամ.

1. Հռիփսիմե Առաքելյան- Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության քարտուղար

2. Միքայել Մանրիկյան- Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար

3. Սաթենիկ Մկրտչյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

4. Հայկ Միրզոյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

5. Արմեն Ներսիսյան- Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ

6. Անի Խաչատրյան-Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության քարտուղար

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Արման Անտոնյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխաղասային հանձնաժողովի նախագահ Գայանե Մելքոմ Մելքոմյանը տեղեկացրեց, որ «Երևանի կենդանաբանական այգի» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու մասին» նախագծի վերաբերյալ իրավական հարցերի մշտական հանձնաժողովի կողմից 01.09.2020թ.-ին N21 եզրակացությամբ տրվել է բացասական եզրակացություն: Միաժամանակ, իրավական հարցերի մշտական հանձնաժողովն առաջարկել է որոշման նախագծի հեղինակ Արման Անտոնյանին՝ «Երևանի կենդանաբանական այգի» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու մասին» ավագանու որոշման նախագծի հավելվածից հանել 3.4 ենթակետի երկրորդ պարբերությունը, և նախագիծը կրկին ներկայացնել քննարկման: Նախագծի հեղինակի կողմից առաջարկն ընդունվել է և քննարկման է ներկայացվել նախագծի լրամշակված տարբերակը: Երևանի ավագանու իրավական հարցերի մշտական հանձնաժողովը քննարկել է Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Արման Անտոնյանի կողմից ներկայացված «Երևանի կենդանաբանական այգի» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու մասին» ավագանու որոշման լրամշակված նախագիծը և քննարկման արդյունքում 07.09.2020թ. N 22 արձանագրությամբ տրվել է դրական եզրակացություն:

«Երևանի կենդանաբանական այգի» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու մասին» Երևանի ավագանու որոշման նախագծի

վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Շ. Սարգսյանը և Երևանի քաղաքապետի տեղակալ Տ. Վիրաբյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1.Գրիգորի Երիցյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Եզրափակիչ ելույթով հանդես եկավ Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Արման Անտոնյանը:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Հաստատել «Երևանի կենդանաբանական այգի» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ - ավագանու 42 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ - կողմ`23, դեմ`7, ձեռնպահ`12

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

12. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N1-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Էդուարդ Ավետիսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 5 անդամ.

1. Անի Խաչատրյան- Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության քարտուղար

2. Դավիթ Խաժակյան-Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար

3. Մարկոս Հարությունյան-Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ

4. Միքայել Մանրիկյան- Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար

5. Գրիգորի Երիցյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Էդուարդ Ավետիսյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Գայանե Մելքոմ Մելքոմյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N1-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար գրանցվել են ավագանու 7 անդամ.

1. Մարկոս Հարությունյան-Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ

2. Հռիփսիմե Առաքելյան- Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության քարտուղար

3. Դավիթ Խաժակյան-Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար

4.Սաթենիկ Մկրտչյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

5. Արմեն Գալջյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

6. Գրիգորի Երիցյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

7. Սուրեն Էյրամջյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության ղեկավար

Եզրափակիչ ելույթով հանդես եկավ Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Էդուարդ Ավետիսյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի «Երևան քաղաքի ավագանու կանոնակարգը ընդունելու մասին» N1-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) 114-րդ կետի 8-րդ ենթակետում «5 թույլ» բառերը փոխարինել «3 թույլ: Պատասխանից հետո հարց տվողը և զեկուցողը իրավունք ունեն արձագանքել՝ մինչև մեկական թույլ տևողությամբ» բառերով:

2) 114-րդ կետի 11-րդ ենթակետում «Քաղաքապետը, Քաղաքապետի տեղակալները և խմբակցությունների ղեկավարները հարց են տալիս ու ելույթ ունենում արտահերթ» բառերը փոխարինել «Ստեղծի փոխանակության ժամանակ Քաղաքապետը, Քաղաքապետի տեղակալները հարց են տալիս ու ելույթ ունենում արտահերթ, իսկ խմբակցության ղեկավարը (կամ նրա բացակայության դեպքում քարտուղարը) կարող է պահանջել խմբակցության անունից չհերթազրկված, արտահերթ մեկ ելույթ՝ հայտարարելով ելույթ ունեցող խմբակցության անդամի անուն-ազգանունը»:

3) 119-րդ կետի առաջին պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«119. Ավագանու հերթական նստաշրջանների ընթացքում՝ երկու ամսվա մեջ առնվազն մեկ նիստի ընթացքում, Ավագանու անդամի բանավոր հարցերին պատասխանում են Քաղաքապետը, Քաղաքապետի տեղակալները, վարչական շրջանների ղեկավարները և Քաղաքապետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարները:»

4) Լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 119.1-րդ կետով.

«119.1 Ավագանու հերթական նիստին՝ օրակարգային հարցերի քննարկման ավարտից անմիջապես հետո, նիստը վարողը հայտարարում է մտքերի փոխանակություն, որի ընթացքում ավագանու յուրաքանչյուր անդամ կարող է հանդես գալ մինչև հինգ թույլ տևողությամբ ելույթով: Ավագանու անդամները ելույթ են ունենում ըստ հերթագրման հաջորդականության՝ նիստը վարողի կողմից ելույթ ունեցողի անուն-ազգանվան հայտարարմամբ:»

5) 120-րդ կետի 7-րդ ենթակետում «երեք» բառը փոխարինել «մեկ» բառով:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 43 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 35, դեմ՝ 7, ձեռնպահ՝ 1

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

Հիմք ընդունելով Երևանի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N1-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 105-րդ կետի պահանջները՝ որոշվեց Երևանի ավագանու 08.09.2020թ. նիստի տևողությունը ժամը 17.00-ից հետո երկարաձգել:

13. ԼՍԵՑԻՆ – Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի փետրվարի 12-ի N604-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Էոնեստ Ավանեսովը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ – Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխաղասային հանձնաժողովի նախագահ Սաթենիկ Մկրտչյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի փետրվարի 12-ի N604-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Եզրափակիչ ելույթով հանդես եկավ Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Էռնեստ Ավանեսովը:

Հիմք ընդունելով Երևանի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N1-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 114-րդ կետի 2-րդ ենթակետը՝ Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Հ. Սարգսյանը հայտարարեց երեսուն րոպե ընդմիջում:

Նիստը վերսկսվեց ժամը 18.40-ին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի փետրվարի 12-ի «Երևան քաղաքի պատվավոր կոչումների և պարգևների մասին» N604-Ն որոշման N1 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումները.

1) N1 հավելվածի 2-րդ կետում «գրականության» բառից հետո «սպորտի» բառը փոխարինել «ֆիզիկական կուլտուրայի և սպորտի» բառերով.

2) N1 հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3.1-րդ կետով.

«3.1. Անձիք, կազմակերպությունները, ստեղծագործական և աշխատանքային կոլեկտիվները Երևան քաղաքի պատվավոր կոչումների և պարգևների շնորհմանը կարող են ներկայացվել Երևանի քաղաքապետին կից հասարակական կարգով գործող խորհրդակցական խորհրդի կարծիքի հիման վրա»:

3) N1 հավելվածի 62-րդ կետի 4-րդ ենթակետը «Երևան քաղաքի» բառերից հետո լրացնել «ֆիզիկական կուլտուրայի և» բառերով:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ - ավագանու 34 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ - կողմ՝ 34, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն

14. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N181-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Գայանե Մելքոմ Մելքոմյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Լուսինե Գևորգյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N181-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Եզրափակիչ ելույթով հանդես եկավ Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Գայանե Մելքոմ Մելքոմյանը:

ՈՐՈՇՎԵՑ – Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի «2020 թվականի տեղական տուրքերի գծով արտոնություններ սահմանելու մասին» N181-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումները.

1) Որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1 կետով՝

«1.1. Սահմանել որ, 2020 թվականի օգոստոսի 4-ին Բեյրութ քաղաքում տեղի ունեցած ավերիչ պայթյունի հետևանքով Լիբանանի Հանրապետությունից մշտական բնակության նպատակով Երևան քաղաք ժամանած լիբանանահայերի և բացառապես նրանց հիմնադրամբ և մասնակցությամբ իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի համար 2020 թվականի համար սահմանված տեղական տուրքերի դրույքաչափերի նկատմամբ կիրառվում են արտոնություններ՝ գրոյական դրույքաչափի կիրառմամբ»:

2) Որոշման 2-րդ կետում «որոշմամբ» բառը փոխարինել «որոշման 1-ին կետով» բառերով:

3) Որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1 կետով՝

«2.1. Սույն որոշման 1.1 կետով նախատեսված արտոնությունների կիրառման համար հիմք է հանդիսանում՝

1) ֆիզիկական անձանց դեպքում՝ Երևանի քաղաքապետին ուղղված դիմումը տեղական տուրքի արտոնություն ստանալու մասին, որին կցվում են դիմումատուի Լիբանանի Հանրապետության անձնագրի կամ Լիբանանի Հանրապետությունում մշտական բնակության իրավունքը հաստատող փաստաթղթի պատճենը, ազգությամբ հայ լինելը հաստատող փաստաթղթի (մկրտության մասին փաստաթուղթ կամ ընտանեկան գրքույկ) պատճենը,

2) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի դեպքում՝ Երևանի քաղաքապետին ուղղված իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ դիմումը տեղական տուրքի արտոնություն ստանալու մասին, որին կցվում են իրավաբանական անձի հիմնադրի (հիմնադիրների) և մասնակիցների կամ անհատ ձեռնարկատիրոջ Լիբանանի Հանրապետության անձնագրի կամ Լիբանանի Հանրապետությունում մշտական բնակության իրավունքը հաստատող փաստաթղթի պատճենը, ազգությամբ հայ լինելը հաստատող փաստաթղթի (մկրտության մասին փաստաթուղթ կամ ընտանեկան գրքույկ) պատճենը, անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ պետական հաշվառման, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ պետական գրանցման մասին միասնական պետական գրանցամատյանից տրված քաղվածք:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2020 թվականի օգոստոսի 4-ից հետո ծագած հարաբերությունների վրա

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 37 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 37, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն

15. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N182-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Գայանե Մելքոն Մելքոնյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Լուսինե Գևորգյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N182-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ - Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի «2020 թվականի տեղական վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» N 182-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումները.

1) Որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1 կետով՝

«1.1. Սահմանել որ, 2020 թվականի օգոստոսի 4-ին Բեյրութ քաղաքում տեղի ունեցած ավերիչ պայթյունի հետևանքով Լիբանանի Հանրապետությունից մշտական բնակության նպատակով Երևան քաղաք ժամանած լիբանանահայերի և բացառապես նրանց հիմնադրմամբ և մասնակցությամբ իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի համար 2020 թվականի համար սահմանված տեղական վճարների դրույքաչափերի նկատմամբ կիրառվում են արտոնություններ՝ զրոյական դրույքաչափի կիրառմամբ, բացառությամբ ավտոտրանսպորտային միջոցը կայանելու և հատուկ տարածքում ավտոտրանսպորտային միջոցի կամ դրա կցորդի պահպանման համար սահմանված տեղական վճարների»:

2) Որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.2 կետով՝

«1.2. Սահմանել որ, 2020 թվականի օգոստոսի 4-ին Բեյրութ քաղաքում տեղի ունեցած ավերիչ պայթյունի հետևանքով Լիբանանի Հանրապետությունից մշտական բնակության նպատակով Երևան քաղաք ժամանած լիբանանահայերի և բացառապես նրանց հիմնադրմամբ և մասնակցությամբ իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի համար 2020 թվականի համար սահմանված ավտոտրանսպորտային միջոցը կայանելու և հատուկ տարածքում ավտոտրանսպորտային միջոցի կամ դրա կցորդի պահպանման համար սահմանված տեղական վճարների նկատմամբ կիրառվում են արտոնություններ՝ ազատելով հաշվարկված տեղական վճարի վճարումից»:

3) Որոշման 2-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5)-րդ ենթակետով.

«5) Սույն որոշման 1.1 կետում նշված դեպքերում՝

ա. ֆիզիկական անձանց դեպքում՝ Երևանի քաղաքապետին ուղղված ծառայությունից օգտվողի, իսկ անչափահաս լինելու դեպքում՝ նրա օրինական ներկայացուցչի դիմումը, որին կցվում են ծառայությունից օգտվողի Լիբանանի Հանրապետության անձնագրի կամ Լիբանանի Հանրապետությունում մշտական բնակության իրավունքը հաստատող փաստաթղթի պատճենը, ազգությամբ հայ լինելը հաստատող փաստաթղթի (մկրտության մասին փաստաթուղթ կամ ընտանեկան գրքույկ) պատճենը, իսկ անչափահաս լինելու դեպքում՝ Լիբանանի Հանրապետության կողմից տրված անձնագրի կամ ծննդյան վկայականի կամ Լիբանանի Հանրապետությունում մշտական բնակության իրավունքը հաստատող փաստաթղթի պատճենը,

ազգությամբ հայ լինելը հաստատող փաստաթղթի (մկրտության մասին փաստաթուղթ կամ ընտանեկան գրքույկ) պատճենը և օրինական ներկայացուցչի անձնագրի պատճենը,

բ. իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի դեպքում՝ Երևանի քաղաքապետին ուղղված իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ դիմումը, որին կցվում են իրավաբանական անձի հիմնադրի (հիմնադիրների) և մասնակիցների կամ անհատ ձեռնարկատիրոջ Լիբանանի Հանրապետության անձնագրի կամ Լիբանանի Հանրապետությունում մշտական բնակության իրավունքը հաստատող փաստաթղթի պատճենը և ազգությամբ հայ լինելը հաստատող փաստաթղթի (մկրտության մասին փաստաթուղթ կամ ընտանեկան գրքույկ) պատճենը, անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ պետական հաշվառման, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ պետական գրանցման մասին միասնական պետական գրանցամատյանից տրված քաղվածք»:

4) Որոշման 2-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6)-րդ ենթակետով.

«6) Սույն որոշման 1.2 կետում նշված դեպքերում՝ Երևանի քաղաքապետին ուղղված ծառայությունից օգտվողի դիմումը, որին կցվում են ծառայությունից օգտվողի Լիբանանի Հանրապետության անձնագրի կամ Լիբանանի Հանրապետությունում մշտական բնակության իրավունքը հաստատող փաստաթղթի պատճենը, ազգությամբ հայ լինելը հաստատող փաստաթղթի (մկրտության մասին փաստաթուղթ կամ ընտանեկան գրքույկ) պատճենը, վարորդական վկայականի և համապատասխան ավտոտրանսպորտային միջոցի կամ կցորդի տեխնիկական անձնագրի պատճենները»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2020 թվականի օգոստոսի 4-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 37 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 37, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն

16. ԼՍԵՅԻՆ - Երևան քաղաքի Լեփսիուսի 2-րդ փողոցն Ուսուր Բեկ Թեմուրյան փողոց անվանափոխելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության ղեկավար Սուրեն Էյրամջյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Սաթենիկ Մկրտչյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի Լեփսիուսի 2-րդ փողոցն Ուսուր Բեկ Թեմուրյան փողոց անվանափոխելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1.Դավիթ Խաժակյան- Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար

Եզրափակիչ ելույթով հանդես եկավ Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության ղեկավար Սուրեն Էյրամջյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Լեփսիուսի 2-րդ փողոցն անվանափոխել քաղաքական, հասարակական, ռազմական, ազգային ազատագրական գործիչ, հայ ազգի բարեկամ Ուսուր Բեկ Թեմուրյանի անվամբ՝ «Ուսուր Բեկ Թեմուրյան փողոց»:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 39 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 39, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն

17. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N186-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վիլեն Արևշատյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Լուսինե Գևորգյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N186-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի «Երևան քաղաքի 2020 թվականի բյուջեի մասին» N186-Ն որոշման NN 2, 3, 6 և 7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն NN1-4 հավելվածների:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ - ավագանու 39 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ - կողմ՝ 39, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն

Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Հ. Սարգսյանի կողմից առաջարկվեց Երևանի ավագանու հերթական նիստը գումարել 2020 թվականի հոկտեմբերի 20-ին, ժամը 11.00-ին:

Առաջարկը ընդունվեց:

Երևանի ավագանու անդամների բանավոր հարցերին տրվեցին պատասխաններ (սղագրությունը կցվում է):

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Հ. ՍԱՐԳՍՅԱՆ